

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում զրկում են միմիայն խմորադրաման մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Կիրակեայ իրական դպրոց.—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Նամակ խորհուրդ. Նամակ Սաթէլից.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Առողջապահական միջադպրոցին
կօնգրէսը վերջնայում:

ԿԻՐԱԿԵԱՅ ԻԿԱԿԱՆ ԴԱՊՐՈՑ

Վաղը բացվելու է Թիֆլիսում մի կիրա-
կեայ դպրոց իրական սեռի համար: Ուրե-
մին մեր տիկինները այդ բանում տղա-
մարդկանցից աւելի եռանդուն և զորու-
նեայ յայտնվեցան: Մինչև որ տղամարդիկ
վաղուց է արդէն որ կազմում են կիրա-
կեայ դպրոցի համար բաղադրեալ ծրագիր-
ներ, մեր տիկինները ամենահեշտ ծրագիր
կազմած լինելով իրանց հիմնելի դպրոցի
համար, աջողեցան ուսումնարանական իշ-
խանութեան լոյսաւթիւնը ստանալ կի-
րակեայ դպրոցի բացման համար:

Եւ ճշմարիտ, եթէ մինչև այժմ դեռ ևս
չէ հաստատուած ստորին դասակարգի աը-
դամարդկանց համար կիրակեայ դպրոց,
որը պէտք է հիմնվել Թիֆլիսի արական
արհեստագործաց դպրոցին կից, այդ այն
պատճառով է, որ դպրոցի հիմնադիրները,
մեր կործիրքով չափից զուրս բաղադրեալ
ծրագիր էին կազմել ու ներկայացրել կա-
ռավարութեան հաստատութեանը: Իսկ
մեր հիմնադիր տիկինները աւելի խելացի
վարվեցան. նրանց բացվելի կիրակեայ դպ-
րոցի ծրագիրը միայն սա է, կրօն, ուսու-
սաց, հայոց և վրաց լեզու և թաւաբանու-
թիւն:

Եւ այդպէս էլ պէտք է լինի, եթէ ու-
ղում ենք զբաւել դէպի կիրակեայ դպրոցը
մեր ստորին դասակարգի աղջիկներին և
կանանց: Աւելի բաղադրեալ ծրագիր միտք
էլ չէր ունենայ առաջարկել կառավարու-
թեան հաստատութեանը, աչքի առաջ ու-
նենալով որ մեր ստորին դասակարգի իգա-
կան սեռը ամենատարրական գիտութիւն-
ներից էլ զուրկ է, ընդհանրապէս: Երանի
թէ այդ փորձիկ ծրագրով էլ դպրոցը կա-
ռողանայ զբաւել կիրակի օրերը մեր տե-
ղական ամբոխի օրիորդների և կանանց
անտարբեր, թմրած կօնտիկները դէպի
ուսման տարրական սկզբունքները:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԵՍՍ
ՎԻԵՆԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին (26-ին), առաւօտեան 11
ժամին, բացվեցաւ առողջապահական վեցերորդ
կօնգրէսը Վիեննայում: Քաղաքում ենք «НОВОСТИ»
լրագրից կօնգրէսի մասին հետեւեալ տեղեկութիւն-
ները: Երաժշտական ընկերութեան մեծ և հոյա-
կապ դահլիճը արդէն առաւօտեան 9 ժամից սկը-
սեց լցվել կօնգրէսի անդամներով: Երաժշտական
ընկերութեան դահլիճը Վիեննայում դառնում աս-
մանազարմալ դահլիճներից մէկն է համարվում:
Տարւ ժամին արդէն դահլիճը լի էր հասարակու-
թեամբ, այնպէս որ անդամներից շատերը ստիպ-
ված եղան կանգնել դռների մօտ, օթեակներում
էլ այն: Ոչ մի կօնգրէս Վիեննայում այնպէս բազ-
մամարդ չէ եղել, որպէս առողջապահական ի-
րաւ է, որ անդամների թիւում գտնվում են և «օ-
տար» անձինք, որոնք առողջապահական դիտու-
թեան մէջ ոչնչով նշանաւոր չեն եղել, որովհետեւ
անդամ համարվում է նա, ով տասը դուրդէն է
վճարել տոմսակի համար: Սակայն այն փաստը, որ
այդ տասը դուրդէն վճարողների թիւը անցաւ
2,200 հոգուց, շատ նշանաւոր է և ցոյց է տա-

նէ զարմանալ պէտք է, որ մեր գործիչ-
ները չը հասկացան, որ և մեր արական
սեռի ամբոխի համար այդ տեսակ հեշտ
ծրագիր կատարելապէս բաւական էր լի-
նէր, քանի որ ստորին դասակարգի մարդի-
կըն էլ մեզանում կատարելապէս զուրկ են
մնում որ և է մտաւոր կեանքից: Մեր
կարծիքով, մեր ամբոխի տղամարդկանց
համար, ինչպէս և մենք յայտնած էինք
մեր մտքերը «Մշակի» անցեալ տարվայ ա-
ռաջնորդող յօդուածների շարքում, աւելի
էլ հարկաւոր է մի կիրակեայ դպրոց Թիֆ-
լիսում, քան թէ իրական սեռի համար,
որովհետեւ մեր ամբոխի տղամարդիկ ամեն
կիրակի օրերը անկարգ կեանք անցկացնե-
լով, հետզհետէ կորցնում են մարդկային
մտաւոր ընդունակութեան ամենափորձիկ
նշույն անգամ: Նրան, այդ քէֆ անող, ան-
կարգ, անառակ կեանք անցկացնող ամբոխի
մարդուն պէտք է վերջապէս զրաւել քա-
ղաքի իւրաքանչիւր թաղում հիմնվել կի-
րակեայ դպրոցներով դէպի մտաւոր կեանքը:
Այժմ հիմնվող իրական կիրակեայ դպ-
րոցը կունենայ երեք բաժանմունք. ուսու-
սաց, հայոց և վրաց: Մենք էլ անցեալ
տարվայ մեր առաջնորդողներում առաջար-
կում էինք որ արական կիրակեայ դպրոցը
ունենայ երեք բաժանմունքներ. ուսուսեցնե-
լու, հայերէն և վրացերէն բաժանմունքներ,
իսկ եթէ կարելի է և մի թուրքերէն բա-
ժանմունք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Հոկտեմբերի 2-ին

Վերջին տարիներս ռուս հասարակութիւնը մեծ
հետաքրքրութեամբ ուսումնասիրում է մանր ար-
հեստագործութիւնը և աշխատում է միջոցներ որո-
նել օգնելու մանր արհեստագործութիւնը զարգաց-
նելուն: Մօսկովայի համառուական արդիւնահանդէ-
սում առաջին անգամ մանր արդիւնագործութիւնը
հանդէս եկաւ մեծ ամփոփով: Այնուհետեւ նա ըս-
կանց արդիւնահանդէսների էական մասերից մէկը
կազմել: Խարկովի արդիւնահանդէսում մասնակ-
ցում են մօտ 500 անձեր իրանց արդիւններով:
Մի քանի դեմստօյններ աչքի առաջ ունենալով,
որ զուգարի ինքը անկարող է արդիւնահանդէս

լիս թէ որակի խորին հետաքրքրութիւն է զար-
կեցնում առողջապահութիւնը և դէմօգրաֆիան
հասարակութեան մէջ: Իսկ անդամների ահապին
մեծամասնութիւնը կազմված է բժշկներից, երկրա-
շափներից, տեխնիկներից և այլ մասնագէտներից,
որոնք ժողովել են աշխարհիս ամեն ծայրերից:
Դահլիճի էստրադայի (բարձրութեան) վրա
բազմակիցներ էին դրված կօնգրէսին հովանաւո-
րող թագաժառանգ Բուդոյի և պատուաւոր հիւ-
րերի համար, որոնց մէջ գտնվում էին զեսպան-
ներ, միլիտարներ, զինեալներ և այլն:

Ուրիշ 11 ժամին եկաւ թագաժառանգ Բուդոյի
իր աղիւստանի ուղեկցութեամբ: Հասարակու-
թիւնը ողջունեց թագաժառանգին բարձրաձայն
աղաղակներով, իսկ կօնգրէսի նախադասը, պրո-
ֆէսոր Լուդվիգ, բարձրացաւ ամբիօն և արտա-
սանեց հետեւեալ ճառը:

«Ձեր կայսերական և արքայական բարձրու-
թիւն. Վեցերորդ միջազգային առողջապահական
կօնգրէսի որոճազիւր յանձնաժողովը դրեց ինձ
վրա ձեր կայսերական և արքայական բարձրու-
թեանը ողջունելու քաղցր պարտաւորութիւնը
այս ժողովում: Տարւ տարի է անցել միայն այն
ժամանակից, երբ առաջին միջազգային առողջա-
պահական կօնգրէսը կայացաւ Բրիւսելում: Նորին
մեծութիւն Բելգիայի թագաւորի հովանաւորու-
թեան տակ: Դրանից յետոյ արդոյ յաջորդում էին
միմեանց կօնգրէսները Փարիզում, Տուրինում, Չի-
նէլում, Հաագում, և այժմ մեր կայսերական դե-

ուղարկելու իր արանքների նմուշը՝ կազմել են
ժողովաւոր իրանց գաւառների արդիւնագործու-
թեան և հանդէս բերել խարկով: Այդպիսի ժողու-
վածուներ ունեն Մոսկովայի, Տուլայի, խարկովի,
Բելգորոդի և ուրիշ զեմստվոները, Կովկասեան
Գիւղատնտեսական ընկերութիւնը և այլն:

Հանդէսը ցոյց է տալիս առաջինը, որ շատ
նուրբ ապրանքների արդիւնագործողները հասա-
րակ վարպետներ են, դիւզայներ են. երկրորդ-
նանց պատրաստած ապրանքները, յաճախ ան-
համեմատ էման են, քան խանութներում ծախ-
վողները. երրորդ՝ մանր արհեստագործները յառա-
ջադիմում են այն տեղերում, ուր նրանք կարո-
ղութիւն ունեն հետեւել վաճառանոցի պահանջ-
ներին. չորրորդ՝ մանր արհեստագործները ըն-
դունակ են ամենաբազմապատկառ արդիւններ
պատրաստելու թէ իրանց անային գործարու-
թեան և թէ վաճառանոց դուրս բերելու հա-
մար:

Մանր արհեստագործութիւնը աւելի չօշակելի
անելու համար մի քանի արհեստագործների պատ-
րաստում են նոյն իսկ հանդէսում կերպաս ըստ
իրանց սովորութեան՝ իրանց գործիչներով: Բե-
սարաբիայի կարուածատեր Ռուսոն բերել է իր
հետ չորս մօլդավացի աղջիկներ, որոնք գորգեր
են գործում, ի տես հասարակութեան: Յանկա-
ցողները գնում են սիրած ապրանքներից կամ
պատուիրում են գորգեր: Չերնիգօվեան նահանգից
Ունդինը բերել է մի քանի ոստայնանկեր, ո-
րոնք գործում են սփուղների, երեսակալների և
այլն: Մօլդավաիւնների կամ վերնիգօլցիների գոր-
ծուածները դեղեցիկ են և կարող են մեծ առևտու-
րի ապրանքներ դառնալ:

Միջազգային առողջապահական կօնգրէսի
փորձել մանր արդիւնագործական յանձնաժողովի
կառավարիչ Վ. Բորիսով օգնելու մանր արհես-
տագործներին՝ ամենայն կերպ հեշտացնելով նը-
րանց ապրանքները տալով նա աշխատում է դըտ-
նել գնողներ և վաճառված ապրանքներից հա-
նում է 10% միջնորդութեան համար: Առաջին
տարիների փորձերը յաջող էին լինում, բայց առև-
տուրը դեռ մեծ ծաւալ չէր ընդունում, հաւանում
էր մի քանի հազարների: Վերջին տարին արդէն
առաջ է լաւ հետեւանք: Երաւիւնը ապրանքների
պահանջը սկսում է 50 հազար ռուբլից աւելա-
նալ: Բորիսովի փորձը ցոյց է տալիս, որ մանր
արդիւնագործութեան զարգացման կարելի է մեծ

դեցիկ քաղաքում: Համարեա ամեն քաղաքակիրթ
երկրներից ժողովել են մասնագէտներ գիտնա-
կան լուրջ աշխատանքի համար. իսկ կառավա-
րութիւնները և քաղաքային վարչութիւնները ու-
ղարկել են խիստ մեծ թիւով պատրաստարարութիւն-
ներ. դա մի ուրախալի նշան է և ապացոյց է
այն բանի, որ առողջապահութեան բարձր նշա-
նակութիւնը անդադար աճում է: Այլապէս չէր
էլ կարելի: Առողջապահութիւնը և դէմօգրաֆիան
նպատակ են դրել իրանց, գիտնական հաստատ
մեթօդների միջոցով, հետազոտել և յաղթահարել
այն հասարակական չարիքը, որ արտադրում է
առաւելապէս մեր դարը, և երկու ուղղութեամբ
ևս էական աջողութեան են հասել: Առողջապա-
հական կօնգրէսները աշխատում են ամբողջ
մարդկութեանը վերաբերեալ խնդիրները ընդհա-
նուր ընկնութեան ենթարկել, որ և կազմում է
մեր ժամանակի գեղեցիկ յատկութիւնը: Կօնգրէս-
ները նպատակ ունեն, մտքերի ամփոփում փոխա-
նակութեան միջոցով, նպատակ դիտութեան
զարգացման: Վեցերորդ միջազգային առողջա-
պահական կօնգրէսը կը զբաղվի, համաձայն հին
սովորութեան, այդ գիտութիւններին վերաբերեալ
մի ամբողջ շարք նշանաւոր խնդիրների ըննադա-
տութեամբ: Այդ խնդիրները լուրջ կերպով մշա-
կել են յայտնի մասնագէտները: Այդ սկզբնական
աշխատութիւնները և, զլլաւորապէս, մեծ գիտ-
նականների ներկայութեան շնորհիւ, մենք հաս-
տատապէս կարող ենք յուսաւ, որ և մեր կօնգ-

րարկ տալ՝ եթէ արդիւնագործողի և սպառողի
մէջ յարաբերութիւնները հեշտացրած և կարճա-
ցրած լինեն:

Կովկասից ևս կան մանր արհեստագործու-
թեան առաւելաներ հանդէսում, մասամբ երկրա-
գործական, մասամբ մանր արհեստագործութեան
մասներում: Այդտեղ կան զանազան տեսակ կեր-
պաններ, զէնքեր, կաշուեղէններ և այլն: Կովկասի
արդիւնները հասարակութեանը հետաքրքրում են
և միշտ չընկալաւորված են լինում բազմապատկառ
մարդիկներով:

Մանր արհեստագործութեան հանդէսի մանրա-
ման նկարագրութիւնը աւելորդ եւ համարում,
որովհետեւ այդ հանդէսի գաղափարական կողմը
աւելի է հետաքրքրել հանդէս կազմողներին, քան
զուտ արհեստագործականը:

Պրոֆէսոր Սկլայսկու նախագահութեամբ տեղի
ունեցան երկու նիստեր, որոնց մասնակցում էին
մասնագէտներ և հետազոտողներ: Նիստերը նուիր-
ված էին մանր արհեստագործութեան զարգաց-
ման խնդրին: Քարտուղարը կազմած էր համառու-
տագործութիւնը բոլոր այն միջոցների, որոնցով
կարելի է օգնել ինչ հանգանակ արհեստագործներին:
Նիստերի վերջնական եզրակացութիւններից մէկն
էլ այն էր, որ կազմվի մի կինարօնական հաս-
տատութիւն, որի գլխաւոր պաշտօնը լինի ամե-
նայն կերպ օգնել մանր արդիւնագործութեան,
ծանօթացնել արհեստագործներին և սպառողնե-
րին մանր արդիւնագործութեան դրութեան հետ:
Եթէ լուրջ կերպով սկսեն իրագործել առա-
ջարկված բազմապատկառ միջոցները՝ մանր ար-
հեստագործութիւնը կարող է շատ շուտով զար-
գանալ և հարստութեան մեծ աղբիւր դառնալ:

ՆԱՍԱԿ ՍԱԹԷԼԻՑ

Սեպտեմբերի 25-ին

Երկու տարի է արդէն, որ ընտելւում Շառլէ-
թի գաւառը ստատիկ պատժում է: Անցեալ տարի
հինգ այս օրերս էր, երբ ամբողջ գաւառը ծածկվե-
ցաւ ձիւնի սպիտակ սաւառով և այդպիսով ժա-
մանակ չեղաւ հունձը քաղելու և, ինչպէս հազոր-
դած էի «Մշակի» անցեալ տարվայ համարներից
մէկում, մեծ պակասութիւն էր գրագցվում ձմեռու
հացի մէջ: Այս տարի էլ բնութիւնը մեղ հետ
լաւ չը վարվեց. վերջին երկու շաբաթներին դի-
չեր ցերեկ շարունակում էր տեղալ սաստիկ անձ-

րէսը մի կերպ կը նպաստէ մարդկութեան համար
այդքան նշանաւոր խնդիրների լուծման: Ձերը
կայսերական և արքայական բարձրութիւնը, որո-
մածաբար ընդունելով հովանաւորութիւնը, կօնգ-
րէսին մի առանձին փայլ տուիք: Այդ շնորհի
համար մենք շատ պարտական ենք ձեզ: Կը թոյլ
տամ ինձ խորին հպատակութեամբ խնդրել, թող
բարեհաճէ ձերը կայսերական և արքայական
բարձրութիւնը ընդունել մեր շնորհակալութիւնը
և բանալ վեցերորդ միջազգային առողջապահա-
կան կօնգրէսը:

Ապա թագաժառանգ Բուդոյի կարդաց հետե-
ւեալ ճառը:

«Պարոններ. ձեր գործադիր մասնաժողովի նա-
խագահին, որը ինձ իսկոյն այնքան սիրալիւր
խօսքեր ասաւ, ի սրտէ հնորհակալ եմ և խնդ-
րում եմ ձեզ բոլորից հաւատարմ լինել այն բա-
նում, որ ինձ համար ուրախութիւն է և պատիւ,
որպէս հովանաւորող, դուրս կանգնել վեցերորդ
միջազգային առողջապահական կօնգրէսին: Պետու-
թեան և հասարակութեան ամենաթանկալին զը-
րամապաւար մարդն է: Իւրաքանչիւր առանձին
կեանք ունի մի յայտնի դին: Այդ կեանքը մենք
պէտք է պահպանենք ոչ միայն մարդասիրութիւ-
նից զուգված, այլ և մեր շահերի համար: Առան-
ձին անհատը, որքան և մեծ լինէին նրա անձնա-
կան բարօրութիւնը ապահովելու միջոցները, այ-
նու ամենայնիւ անդր է կուսել մեզ չընկալաւորող
ընտելւան անբարեպաշտ ազդեցութեան դէմ:

(Կը չաբուհնակիլի)

ՄԱՐԿԱՂԻՐ-ՀՐԱՄԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лористъ-Меликовская ул. д. каз.